Միևնույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հիմք ընդունելով վերոգրյալ հոդվածների պահանջները՝ Դատարանը գտնում է, որ պետք է պատասխանող ՀՀ դատական դեպարտամենտից պահանջել նշված ապացույցները, որոնք վերջինս պետք է դատարան ներկայացնի որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-200-րդ, 234.5-րդ, 234.6-րդ ու 234.9-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ՄԱՆՎԵԼՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայցադիմումն ընդդեմ ՀՀ դատական դեպարտամենտի՝ «ՄԱՆՎԵԼՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ–ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 16.10.2023 թվականին կայացված թիվ 16 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ, և գործը քննել գրավոր ընթացակարգով:

Եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի 12.01.2024 թվականին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

2. **Պատասխանող ՀՀ դատական դեպարտամենտից պահանջել 16.10.2023 թվականին կայացված թիվ 16 որոշման հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, որոնք պատասխանողը կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով**

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանողի կողմից ենթակա է կայացման այն ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**